ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «11» դեկտեմբերի 2017թ.

2017թ-ի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 10:00-ին, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48/1 , «Սախարով» բիզնես կենտրոնում, տեղի ունեցավ ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Դիանա	Վարդանյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ ընդհանուր բաժնի պետ.
Աննա	Ավագյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ հաճախորդների սպասարկման մասնագետ.
Լիլիթ	Վարոսյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գլխավոր հաշվապահ.
Նարեկ	Գրիգորյան	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ տնտեսվար-վարորդ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գնումների մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դիանա Վարդանյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դիանա Վարդանյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի/ների/ ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի/ների/ մասով 1-ին տեղը զբաղեցրած «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. Հաստատել ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ՝ բավարար.
2) «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ՝ բավարար.
3) «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ՝ բավարար.
4) «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ՝ անբավարար:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ՀԱԱԳ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Դ. Վարդանյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ավագյան _____

Լ. Վարոսյան _____

Ն. Գրիգորյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____